ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք, ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ԳՅՈՒՂ ԲԱԶՈՒՄ 1 ՓՈՂՈՑ ԹԻՎ 2, Հեռ. (0322) 64109 , bazum.lori@mta.gov.am

N 016/156
18 հուլիս 2017թ.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ՄԱՐԶՊԵՏ
ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ

Կից ներկայացնում ենք Բազում համայնքի ղեկավարի թիվ 51-Ա և 52-Ա որոշումները:

Առդիր 2 էջ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԲԱԶՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Բազում համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Բազում, (0322) 64109, bazum.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

13 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 51-Ա

ԱՆՉԱՓԱՀԱՍ ՄԵՐԻ ԱԼԲԵՐՏԻ ՀԱՄԲԱՐՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Սաթենիկ ժորայի Ծատուրյանի դիմում անչափահաս Մերի Ալբերտի Համբարյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու մասին, թիվ 28AA0827439 լիազորագիրը, խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2017 թ-ի հուլիսի 13-ի թիվ 2 արձանագրությունը, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի >> 34-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Բազում համայնքի բնակչուհի Սաթենիկ Ծատությանին մինչև 01.09.2017 թ-ը նշանակել խնամակալ քրոջ աղջկա՝22.11.2008 թ-ին ծնված անչափահաս Մերի Համբարյանի նկատմամբ, անձնագիր ստանալու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԲԱՂՈՒՄ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
13 ՀՈՒԼԻՍԻ 2017թվականի N 52-Ա

06-023-0052-0007 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ, ՕԺԱՆԴԱԿ ԿԱՌՈՒՑՑՆԵՐԻ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՆԻՉԿԱ ՄԵԽԱԿԻ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացի Վ. Մնացականյանի դիմումը, անհատական բնակելի տան տեխնիկական անձնագիրը կազմված 16.01.1986թ., հողային բարեփոխումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 02.05.1991 թ-ի թիվ 2 որոշումը, ղեկավարվելով <<Տեղական Ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43 հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով, Հայաստանի հանրապետության <<Քաղաքացիական օրենսգրքի>> 188-րդ հոդվածի 2-րդ կետի 4-րդ հոդվածով, Իրավունք հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին ՀՀ օրենքի 2-րդ և 3-րդ հոդվածներով, ՀՀ ՀՕ 60-րդ և 64-րդ հոդվածներով , ինքնակամ կառուցված, շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին ՀՀ ՀՕ 510-Ն օրենքի 7-րդ հոդվածի 1-ին կետով, ՀՀ կառավարության 2005 թ-ի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1.Վերականգնել 06-023-0052-0007 ծածկագրի տակ գտնվող 0.25617 հա բնակելի կառուցման և սպասարկման հողամասի և հողամասում գտնվող այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող , առանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներ իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 1970-87 թթ. կառուցված 187.74 քմ մակերեսով բնակելի տան, 1990 թ կառուցված 26.2 քմ մակերեսով անասնագոմի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վանիչկա Մեխակի Մնացականյանի /ծնված 1946թ/ սեփականության իրավունքը:

2.Անշարժ գույքը չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի հակասում քաղաքաշինական նորմերին, չի առաջացնում սերվիտուտ:

3.Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասից հատկացված 0.13 հա հողամասն անհատույց սեփականության իրավունքով վերահատկացնել , իսկ հատկացվածից ավել զբաղեցրած 0.12617 հա հողամասի նկատմամբ օրենքի ուժով ճանաչել Վանիչկա Մնացականյանի սեփականության իրավունքը:

4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:

5.Ուժը կորցրած ճանաչել Համայնքի ղեկավարի ղեկավարի 26.06.2017 թ-ի թիվ 42-Ա որոշումը և ներկայացված հողային բարեփոխումների և սեփականաշնորհման որոշումից քաղվածքը:

6.Առկա է ինքնակամ 2016 թ-ին կառուցված 37.93 քմ մակերեսով բնակելի տան մաս:

7. Անշարժ գույքին տրամադրել փոստային հասցե՝ գ. Բազում 5 փողոց թիվ 29:

8.Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի Լոռիի մարզային ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՐԲՈՒՀԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ